ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 17.05.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/25

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ «Վոլֆ Շին» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝

Ա. Քալանթարյանի (լիազորագիր, տրված՝ 30.04.2019թ.)

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 18.04.2019թ. թիվ 26/26-1/6569-2019 գրությամբ «Վոլֆ Շին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ազգային անվտանգության ծառայության 08.04.2019թ. թիվ 20/240 գրության հիման վրա, 18.04.2019թ. թիվ 26/26-1/6569-2019 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Վոլֆ Շին» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Վոլֆ Շին» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Վոլֆ Շին» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/25 ընթացակարգի շրջանակներում 30.04.2019թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է, որ Ընկերությունը սխալմամբ գնային առաջարկը ներկացրել է խիստ ցածր գներով, ուստի չէր կարող շարունակել գնման գործընթացին հետագա մասնակցությունը:

3. ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 08.04.2019թ. թիվ 20/240 գրությամբ ներկայացրել է «Վոլֆ Շին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/25 ընթացակարգի շրջանակներում 30.04.2019թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ՆԳ-2019/25 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ՆԳ-2019/25 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից ՀՀ ազգային անվտանգության ծառայության կարիքների համար կազմակերպվել է «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏվ-ԳՀԱՊՁԲ-1/19-ՇԻՆԱՆՅՈՒԹ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Վոլֆ Շին» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.03.2019թ. ժամը 14:15-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Վոլֆ Շին» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի մի շարք, այդ թվում նաև 35-րդ չափաբաժնի մասով:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ուղղված 01.04.2019թ. գրությամբ «Վոլֆ Շին» ՍՊԸ-ն հրաժարվել է «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-1/19-ՇԻՆԱՆՅՈՒԹ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հետագա մասնակցությունից՝ 35-րդ չափաբաժնի մասով:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 18.04.2019թ. թիվ 26/26-1/6569-2019 գրությունը, ՀՀ ազգային անվտանգության ծառայության 08.04.2019թ. թիվ 20/240 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով

նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից ՀՀ ազգային անվտանգության ծառայության կարիքների համար կազմակերպվել է «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-1/19-ՇԻՆԱՆՅՈՒԹ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Վոլֆ Շին» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.03.2019թ. ժամը 14:15-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Վոլֆ Շին» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի մի շարք, այդ թվում նաև 35-րդ չափաբաժնի մասով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ուղղված 01.04.2019թ. գրությամբ «Վոլֆ Շին» ՍՊԸ-ն հայտնել է, որ Ընթացակարգի 35-րդ չափաբաժնի մասով գնային առաջարկը սխալ քանակով հաշվարկի արդյունքում, ներկայացվել է ապրանքի ինքնարժեքից 10 անգամ ցածր:

Նույն գրությամբ Ընկերությունը հայտնել է, որ ստեղծված իրավիճակում հնարավոր չէ շարունակել գնման գործընթացը, ուստի Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին առաջարկել է մերժել Ընկերության հայտը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, ***եթե հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:***

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «Վոլֆ Շին» ՍՊԸ-ն, ՀՀ ազգային անվտանգության ծառայության կարիքների համար կազմակերպված «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-1/19-ՇԻՆԱՆՅՈՒԹ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերը բացելուց հետո, 01.04.2019թ. գրությամբ դիմել է ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ խնդրելով մերժել իր կողմից ներկայացված հայտը, դրանով իսկ հրաժարվելով գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Այսպիսով՝ գտնում եմ, որ «Վոլֆ Շին» ՍՊԸ-ն «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-1/19-ՇԻՆԱՆՅՈՒԹ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետի խախտում, ուստի առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 18.04.2019թ. թիվ 26/26-1/6569-2019 գրությամբ «Վոլֆ Շին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Վոլֆ Շին» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ